


1.2 Արտադրություն (ծառայություններ)

1.2.1. Արդյունաբերություն

Արդյունաբերական արտադրանքի ծավալը և իրացումը: 2002թ. հունվար-հուլիսին հանրապետությունում, ըստ 1660 արդյունաբերական կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև ամենամսյա վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ըստ ցածր առաձգականությամբ ապրանքների արտադրության բազային ցուցանիշի), ընթացիկ գներով, թողարկվել է 181103.6 մլն դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 186003.1 մլն դրամի արտադրանք, այդ թվում ԱՊՀ երկրներում՝ 20594.5 մլն դրամի, այլ երկրներում՝ 46902.4 մլն դրամի արտադրանք:

2001թ. հունվար-հուլիսի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 111.9%, իսկ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը առանց էներգետիկայի՝ 122.7%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան տոկոսներով 2000թ. դեկտեմբերի նկատմամբ



Արդյունաբերական արտադրանքի դինամիկան

(տոկոսներով)

	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
2001 թ.			
հունվար	78.5	116.5	78.5
փետրվար	95.0	106.0	74.6
մարտ	105.9	103.4	79.0
ապրիլ	89.9	103.2	71.0
մայիս	98.9	90.7	70.2
հունիս	103.2	95.7	72.4
հուլիս	108.5	93.1	78.6
օգոստոս	107.1	105.4	84.2
սեպտեմբեր	104.7	113.8	88.2
հոկտեմբեր	84.9	98.8	74.9
նոյեմբեր	106.7	98.5	79.9
դեկտեմբեր	132.1	125.8	105.5
2002 թ.			
հունվար	71.7	107.1	71.7
փետրվար	100.9	104.5	72.3
մարտ	116.4	116.9	84.2
ապրիլ	88.1	115.6	74.2

	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
մայիս	95.2	107.3	70.6
հունիս	103.7	115.8	73.2
հուլիս	114.4	104.6	83.7



**Արդյունաբերական արտադրանքի արտադրությունը
ըստ տնտեսական գործունեության տեսակների¹**

	Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, ընթացիկ գներով ² , մլն դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով ² , մլն դրամ	2002թ. հունվար-հուլիսին, արտադրանքի (աշխատանք- ների, ծառայությունների) ֆիզիկական ծավալի ինդեքսը %- ով 2001թ. հունվար-հուլիսի նկատ- մամբ, համադրելի գներով
Ամբողջ արդյունաբերությունը	181103.6	186003.1	111.9
<i>այդ թվում՝</i>			
էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	47353.4	47353.4	84.8
հանքագործական արդյունաբերություն մշակող արդյունաբերություն	13863.1	13005.8	101.1
	119887.1	125643.9	125.1
<i>որից՝</i>			
սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն	64245.8	65089.4	104.0
ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	5022.7	5354.6	151.4
մանածագործական արտադրություն	878.2	819.8	118.5
հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում	1061.3	990.4	88.0
կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշիկեղենի արտադրություն	144.6	118.0	95.8
բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն	739.6	722.1	105.1
քիմիական արդյունաբերություն	3449.9	2790.5	66.1
ռետինե և պլաստմասսայե արտադ- րատեսակների արտադրություն	286.7	297.6	92.2
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	4642.3	4632.1	118.3
մետաղագործական արդյունաբերություն	18178.9	18831.2	127.4
պատրաստի մետաղե արտադրատե- սակների արտադրություն	1056.4	812.4	116.0
մեքենաների և սարքավորանքի արտադրություն	1999.4	3033.0	61.7
ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	13061.6	17028.1	224.7
գործունեության այլ տեսակներ	5089.7	5124.7	100.1



¹ Արդյունաբերական արտադրանքի արտադրության վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ տնտեսական գործունեության տեսակների, առավել մանրամասն գետեղված է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության տեսակների» վիճակագրական տեղեկագրում (տեղեկագրի ծածկագիրը՝ 1210-201):

² Հաշվարկված են առանց ավելացված և ակցիզային հարկերի:



Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության բաժինների 2002թ. հունվար – հուլիսին





Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում



Հանքագործական արդյունաբերություն



Մշակող արդյունաբերություն



2002թ. հունվար-հուլիսին արտադրված (հաշվառվող) 109 հիմնական արտադրատեսակներից (բնեղեն արտահայտությամբ) 54 գծով ձեռք է բերվել կամ գերազանցվել 2001թ. նույն ժամանակաշրջանի արտադրության մակարդակը, այդ թվում արտադրատեսակական նշանակության արտադրանքի՝ 57-ից 29-ի և սպառողական ապրանքների՝ 52-ից 25-ի գծով:

Սպառողական ապրանքների արտադրության ծավալները¹

(մլն դրամ)

	Փաստացի թողարկումը հունվար-հուլիսին		Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
	2002թ.	2001թ. ²	
Սպառողական ապրանքներ, ընդամենը	77744.6	76196.0	102.0
<i>այդ թվում՝</i>			
պարենային ապրանքներ	46535.6	46399.4	100.3
ալկոհոլային խմիչքներ (ներառյալ գարեջուրը)	15944.5	14016.8	113.8
ոչ պարենային ապրանքներ, ընդամենը	15264.5	15779.8	96.7
<i>այդ թվում՝</i>			
թեթև արդյունաբերության ³	4739.6	5428.4	87.3
մշակութային և տնտեսական նշանակության	10524.9	10351.4	101.7

Ընդհանուր առմամբ, 2002թ. հունվար-հուլիսին հանրապետությունում թողարկվել է 3300.0 մլն կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է 2001թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 97.1%: Ընդ որում, ՅԷԿ-երում արտադրված էլեկտրաէներգիան ավելացել է 57.2%, ՀԱԷԿ-ում՝ 7.8%, իսկ ՋԷԿ-երում նվազել է 44.1% -ով:

2002թ. հունվար-հուլիսին ՀԱԷԿ-ը թողարկել է 1679.4 մլն կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է հաշվետու ժամանակաշրջանում հանրապետությունում թողարկված ամբողջ էլեկտրաէներգիայի 50.9%-ը, ՋԷԿ-երը, համապատասխանաբար՝ 702.3 մլն կվտ ժամ և 21.3%-ը, ՅԷԿ-երը՝ 918.3 մլն կվտ ժամ և 27.8%-ը: 2002թ. հունվար-հուլիսին հանրապետությունում թողարկվել է 203.0 հազ.Գկալ ջերմային էներգիա, որը կազմել է 2001թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 57.8%-ը:

Սննդամթերք, ներառյալ խմիչքներ և ծխախոտ, արտադրող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները⁴

	2002 թ. հունվար-հուլիս	2001 թ. հունվար-հուլիս	2002թ. հունվար-հուլիսը %-ով 2001թ. հունվար-հուլիսի նկատմամբ
Ձկան որս, տոննա	314.2	425.5	73.8
Միս ⁵ , տոննա	18471	17475	105.7
Երշիկեղեն, տոննա	668.7	608.2	109.9
Պանիր ⁵ , տոննա	2699	2650	101.8
Պաղպաղակ, տոննա	818.9	629.2	130.1
Կաթ և կաթնամթերք (վերահաշվարկված կաթի) ⁵ , հազ. տոննա	141.3	135.3	104.5
Պահածո, հազ. պայմ. բանկա	2972.2	3793.7	78.3
Ալյուր, տոննա	60215	68138	88.4
Ձավարեղեն, տոննա	9.0	14.3	62.9
Հաց և հացամթերք, հազ. տոննա	171.9	174.6	98.5
Հրուշակեղեն, տոննա	1261.0	1786.4	70.6
Մակարոնեղեն, տոննա	437.7	470.0	93.1
Բուսական յուղ, տոննա	1154.1	65.2	17.7 անգամ
Օդի և օդու-լիկյորի արտադրանք, հազ. լիտր	4268.3	4949.9	86.2
Կոնյակ, հազ. լիտր	3100.8	2594.9	119.5
Խաղողի գինի, հազ. լիտր	867.5	1391.6	62.3
Շամպայն գինի, հազ.լիտր	185.0	239.6	77.2
Գարեջուր, հազ. լիտր	3935.6	5690.8	69.2
Ոչ ալկոհոլային ըմպելիքներ, հազ. լիտր	13791	13743	100.4
Հանքային ջրեր, հազ. 0,5 և շիշ	19243	20761	92.7
Աղ, տոննա	14538	14370	101.2
Սիգարետներ, մլն.հատ	1317.2	875.4	150.5
Ֆերմենտացված ծխախոտ, տոննա	851.5	-	-

Մանածագործական և կարի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների

¹ Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:
² 2001թ. սպառողական ապրանքների արտադրության ծավալը հաշվարկված է 2002թ. գներով:
³ Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):
⁴ Այստեղ և հետայսու բերված տեղեկատվությունը առավել մանրամասն գետնի վրա է կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտադրությամբ՝ վիճակագրական տեղեկագրում (տեղեկագրի ծածկագիրը՝ 1210-202):
⁵ Ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերամշակումը (բացառությամբ ներքին սպառումը):

թողարկած հիմնական արտադրատեսակները

	2002 թ. հունվար- հուլիս	2001 թ. հունվար- հուլիս	2002թ. հունվար-հուլիսը %-ով 2001թ. հունվար-հուլիսի նկատմամբ
Բամբակյա գործվածքներ, հազ. մ ²	287.6	41.2	7 անգամ
Բրոյա գործվածքներ, հազ. մ ²	10.1	8.5	118.8
Գորգեր և գորգեղեն, հազ. մ ²	9.6	10.3	93.2
Գուլպեղեն, հազ. զույգ	253.7	280.7	90.4
Տրիկոտաժեղեն, հազ. հատ	491.6	1187.4	41.4
Կարի արտադրանք ¹ , մլն. դրամ	4459.0	4889.6	91.2

2002թ. հունվար-հուլիսին **քիմիական** արդյունաբերության հիմնական արտադրատեսակներից լաբաներկանյութերի արտադրությունը 2001թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 3.3 անգամ, լվացող և մաքրող միջոցներինը՝ 2.4 անգամ, քիմիկա-դեղագործական արտադրանքինը՝ 25.6%-ով, իսկ պլաստմասսայից իրերի, կաուստիկ սոդայի և սինթետիկ կաուչուկի արտադրությունները նվազել են, համապատասխանաբար՝ 6.4, 41.9 և 45.1%-ով:

Ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությամբ և հանքարդյունահանմամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2002 թ. հունվար- հուլիս	2001 թ. հունվար- հուլիս	2002 թ. հունվար-հուլիսը %-ով 2001թ. հունվար- հուլիսի նկատմամբ
Հավաքովի երկաթբետոնե կառուցվածքներ, մ ³	10722	10967	97.8
Ապրանքային բետոն, մ ³	6314	16350	38.6
Երեսպատման սալեր բնական քարից, մ ²	29145	37888	76.9
Ոչ հանքային շինանյութեր, մ ³	90481	52709	171.7
Կիր, տոննա	2678.0	3261.2	82.1
Ցեմենտ, հազ. տոննա	162.7	129.4	125.7
Կլինկեր, հազ. տոննա	151.3	105.0	144.1
Գաջ, տոննա	18433	5818	3.2 անգամ
Կանոնավոր կտրվածքի տուֆ, մ ³	34645	28721	120.6
Ծակոտկեն լցանյութեր, մ ³	39000	23488	166.0
Ալյումինե և մետաղապլաստիկ իրեր, մ ²	3746	6088	61.5

Մետաղագործական արդյունաբերության կազմակերպությունների կողմից հաշվետու ժամանակաշրջանում 2001թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ալյումինե փայլաթիթեղի արտադրությունն ավելացել է 42.3%-ով, պղնձե խտանյութում պղնձինը՝ 4.5%, իսկ կոնվերտորային (սև) պղնձի և ալյումինե գլանվածքի արտադրությունները նվազել են, համապատասխանաբար՝ 18.8 և 55.8%-ով:

Պատրաստի մետաղե արտադրատեսակների, մեքենաների և սարքավորանքի ու էլեկտրական մեքենաների և էլեկտրասարքավորանքի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2002 թ. հունվար- հուլիս	2001 թ. հունվար- հուլիս	2002 թ. հունվար-հուլիսը %-ով 2001թ. հունվար- հուլիսի նկատմամբ
Մետաղահատ հաստոցներ, հատ	154	71	2.2 անգամ
Ռելեներ, հազ. հատ	224.4	186.7	120.2
Ռիժային ճկուն կաբելներ, կմ	3.2	11.1	28.8
Ռիժային կաբելներ մինչև 1կՎ լարման համար, կմ	37.1	515.0	7.2
Ռետինապատված հաղորդալարեր, կմ	74.9	741.0	10.1
Տեղակայման հաղորդալարեր, կմ	669.9	2731.4	24.5
Լուսավորման էլեկտրալամպեր, հազ. հատ	4629.8	1707.0	2.7 անգամ
Պոմպեր, հատ	216	1974	10.9
Ճնշակներ, հատ	-	19	-
Փոքր հզորության էլեկտրաշարժիչներ, հատ	1953	1808	108.0
63-355 մմ բարձրությամբ պտտման առանցքով փոփոխական հոսանքի էլեկտրաշարժիչներ, հատ	111	97	114.4
0.5-100 կՎտ հզորության փ/հ գեներատորներ, հատ	50	-	-
Շարժական էլեկտրակայաններ, հատ	1	16	6.3
Ուժային տրանսֆորմատորներ, հատ	12	-	-
Ավտոմեքենաներ, հատ	11	-	-

¹ Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):